

Անեկդոտներ 8-ը մարտի

Փչացել է դռելս: Հիմա ստիպված եմ մարտի 8-ին կնոջս նոր դռել գնել:

Եթե երկիրը կառավարեին միայն տղամարդիկ, ապա մարտի 8-ը կտեղափոխեին փետրվարի 29-ին, որպեսզի նշվեր 4 տարին մեկ:

Պարզվում է մարտի 8-ը հորինել են ծաղիկ վաճառողները, իսկ ամբողջ մեղքը բարդել են Կլարա Ցետկինի վրա:

Սիրելիս դու այսօր լվացքից գործ չունես, չէ որ այսօր մարտի 8-ն է: Թող մնա վաղը կանես:

Աղջիկների կողմից տղաներին նվիրված նվերները փետրվարի 23-ի կապակցությամբ դրանք ներդրումներ են մարտի 8-ի նվերների համար:

Սուրբ Վալենտինի տոնը դա մարտի 8-ի "Դեմո" տարբերակն է:

Մարտի 8-ը պատվով հաղթահարելուց հետո որոշեցի շարունակել մնալ ամուրի:

Մարտի 9-ը նշվում է որպես մարտի 8-ից մնացած հետևանքների դեմ պայքարի միջազգային օր:

Ջղեր խաչիկին ամեն Երևան գալուց երևանցիները ասում են.

- Ջղեր խաշ չբերիր էլի, չէ՞....
- Տղեք ջան ես օր ամեն գալուս ձեզի խաշ բերեմ, մեր կովերը կաստիլներով ման գուկան

- Լենինականում հարցնում են. "Ինչու՞ Յուրի Վարդանյանը դարձավ աշխարհի չեմպիոն:"

- Է~ իրան դրգինք ինքը դարձավ:

Մեկի զոքանչը մահանում է, հավաքվում են ընկերները:

- Դե տղերք ջան, վաղը զոքանչիս տանում ենք Ղարաբաղ, թաղելու:
- Ո՞նց, դուք Ղարաբաղում արմատներ ունե՞ք:
- Չէ, նոր ենք տանում զցենք:

- Հանդիպում են Երևանցին ու Ղարաբաղցին:

Ղարաբաղցին. - Ո՞նց ես:  
Երևանցին (տխուր). - Ոնց ասես:

- Ապարանցին դժգոհում ա.

- Էս Ղարաբաղցիք մեզանից ապարանցի են: Ասին՝ գնանք, Բաքուն գրավենք, եկան, Երևանը գրավեցին:

- Ապարանում ձյուն է գալիս, փողոցներում աղ են ցանցում, ապարանցիները աղի վրա խաչ հանելով մեքենայի հետևից գնում են:

18.07.14

Պատկերացնում ես, երեկ մեզ հյուրեր էին եկել ապագայից:

-Այդ ինչպե՞ս:

-Պայմանավորվել էինք, որ այսօր էին գալու, բայց նրանք երեկ հայտնվեցին:

Հարբած մարդը ուշ տուն է վերադառնում:

Այդ ժամանակ լսվում են ժամացույցի երեք զարկերը:

-Դե ես գիտեմ, որ ժամը մեկն է, պետք չէ ինձ երեք անգամ հիշեցնել:

Շիկահերը զանգում է ավիաընկերություն:

-Ասացեք, ինչքա՞ն է տևում թռիչքը Սան-Ֆրանցիսկոյից Նյու-Յորք:

-Մեկ րոպե,-պատասխանում է օպերատորը:

-Շնորհակալություն,-ասում է շիկահերը և կախում լսափողը:

Ուսուցիչն ասաց, որ ես մաթեմատիկա ընդհանրապես չգիտեմ և օրագրիս մեջ ինչ-որ թվանշան դրեց:

Երեվանցին մարզերից մեկի դպրոցի մոտով անցնում ա, լսում ա դպրոցում բաժր աղմուկ, մեկը անընդհատ գոռում ա <<կանաչը վերեւ, կանաչը վերեւ>> էլի ա քայլում ու լսումա <<կանաչը վերեւ, կանաչը վերեւ>>, աղմուկը շարունակվում ա էլի ինչ որ մեկը բարձր գոռում ա <<կանաչը վերեւ, կանաչը վերեւ>>: Երեվանցին էլ չի դիմանում որոշում ա մտնի ներս տեսնի էդ ինչ ա կատարվում... մտնում ու տեսնում ա դպրոցում ծառատունկ են անում:

Մարդ Ձմեռ Պապի նման աշխատանք պիտի ունենա՝364 օրը մեկ, չորս տարին մեկ էլ լրացուցիչ հանգստյան օր:

20.06.14

Հայ ֆուտբոլային մեկնաբանը Հայաստան - Գերմանիա խաղի մասին. -Ահա գնդակով հայ ֆուտբոլիստներն են, փոխանցում առաջ!,վտանգավոր է!, հարված` գոոոոոոոոոոոոո 1-0: Հերթական գրոհն է,հարված!, ափսոս գնդակը դիպչում է ուղղահայաց դարպասածողին, ոչ դեռ գրոհը շարունակվում է հարված գոոոոոոոոոոո 2-0:Ահա ևս մեկ գոլ մեր թիմի կողմից 3-0: Հերթական գրոհն է հարված! ոոոոոչ!! գնդակը դիպչում է դարպասածողին:Բայց ոչինչ մենք հաղթում ենք 3-0 հաշվով: Ահա այսպես է պետք մարզվել, ի վերջո վաղը հանդիպելու ենք Գերմանիայի ընտրանու հետ))):

Վրացի ֆուտբոլային մեկնաբանը Վրաստան- Բրազիլիա խաղի ժամանակ մեկնաբանում է. \_\_ԵՎ ահա սիրելի ֆուտբոլասեր բարեկամներ ցանկանում եմ տեղեկացնել այն մասին, որ հաշիվը 0-15 է, օգուտ Բրազիլիային: Բայց հանկարծ չհուսահատվեք, մեր թիմը դեռ չի պարտվել,դեռ ամեն ինչ կորած չէ, որովհետև դեռևս ընթանում է խաղի 20-րդ րոպեն, և առջևում մի ամբողջ 70 րոպե կա ))))):

Եզդին գնում է մարզադաշտ` ֆուտբոլի.. նստած ուշադիր կողքերնա նայում, մեկը կողքից ասում է. - այ ընկեր, եկել ես ֆուտբոլ նայելու, թե՞ ինչ.. խաղն արդեն ավարտվելու վրայա, դու հլա շուրջդ ես ուսումնասիրում.. - վալլա-վալլա, ես էդ ֆուտբոլը փոքրուց չեմ սիրում ախար.. ուղղակի մտածում եմ` այ մարդ էսքաասն շատ ոչխար ունենար` ինչ բախտավոր մարդ պիտի լիներ.. հարցնողը բորբոքվումա. - չջոգինք արա` էս սաղիս ոչխարի տեղ ե՞ս դրել.. - այ, այ, որ քու պես էլ մի դուխով շուն լիներ է` մարդու քեֆին քեֆ չէր հասնի.. ))):

17.06.14

Կինը դիմում է ամուսնուն.

-Չախ ձեռքս ինչ-որ շատ է քոր գալիս, ասում են` փողի նշան է:

Ամուսինն, առանց թերթից կտրվելու.

-Չե՛մ տա:

Երեխան հարցնում է իր հաշվապահ մայրիկին

- Մամ, կենսաբանության գրքում գրված է, որ մարդու 80 %-ը ջուր է, դա ճի՞շտ է:

- Դե որ գրքում է գրած, ուրեմն ճիշտ է.

- Բա էն 20%-ն ի՞նչ է

- Էն էլ ԱԱՀ-ը կլինի...

Ապարանցուն ասում են՝ մի հատ սառը զենքի անուն տուր, ասում ա՝ ձնագնդիկ:

Ապարանցու տունը վառվում ա, ասում ա՝ մեկա բանալին մոտսա

Ապարանցին աղջկան ամուսնացնում է, խնամիրներին փող է տալիս, որ մոտիկ տեղ ընկնի: